

ԱԹԵՆՔԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՀԵԼԼԱԴԱՅԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ, ՆՈՐԻՆ ԳԵՐԱՇՆՈՐՀՈՒԹՅՈՒՆ ՍԵՐԱՖԻՄԻ ՆԱՄԱԿԸ

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ
ՎԱԶԳԵՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին, Հայաստան, ՍՍՀՄ

Ձերդ Սրբություն,

Խորապես կգացվեցինք Ձերդ Սրբության հունվար 18-ի նամակից, որով տեղեկացնում էիք 70-ամյակը 1915 թվականի ողբերգական Եղեռնի, որ գործվեց հայ մարտիրոս ժողովրդի դեմ, որ արժեց միլիոնավոր անմեղ կոհերի կյանք:

Մեր Եկեղեցին և ապգը հատկապես դյուրապգաց են հայ ժողովրդի կրած այս հալածանքների նկատմամբ, որովհետև նրանք նույնպես ենթարկվել են նման պայմանների և բաժանել են նման ճակատագիր: Երկարատև բարեկամության կապերն ու ընդհանուր տառապանքները ամրացրել են մեր համերաշխությունը մեր հայ եղբայրների հետ: Վստահեցնում ենք Ձերդ Սրբությանը, որ մեր մտածումներն ու աղոթքները միշտ Ձեզ և Ձեր ժողովրդի հետ են և Ձեզ հետ պիտի լինեն հատկապես այդ ողբերգության ոգեկոչման օրը:

Թող Աստված հանգիստ տա այդ անթիվ հոգիներին, որոնք անարդար մահվան արժանացան իրենց հավատքի համար: Թող Տերը առաջադիմություն և բարգավաճում պարգևի Ձեր Եկեղեցուն և ապգին և իրականացնի Ձեր ապնիվ ակնկալությունները:

Առավել սիրով ի Քրիստոս՝

ՍԵՐԱՖԻՄ
ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԱԹԵՆՔԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՀԵԼԼԱԴԱՅԻ